ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0047,
Նորք, Ա.Արմենակյան փողոց, 108/4
Հեռախոս՝ (+37410) 650971, 650961
Ֆաքս՝ (+37410) 653809
Էլ.փոստ՝ norkmarashmc@gmail.com

"Nork-Marash" Medical Center
Armenakyan str. 108/4, Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 650971, 650961
Fax: (+37410) 653809
E-mail: norkmarashmc@gmail.com

Медицинский Центр «Норк-Мараш»
РА, Ереван, 0047, ул. А.Арменакяна 108/4
Телефон: (+37410) 650971, 650961
Факс: (+37410) 653809
Эл.почта: norkmarashmc@gmail.com

«02» փետրվարի 2026թ.

ՀՐԱՄԱՆ N ԳՆ-101-Ա
ՍՈՒՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ Ա/Զ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների Մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<բ>> ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով, և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիր ատուի անվանում	Իրավական հիմքը	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
ծածկագիրը	չափաբաժնի համարը	չափաբաժնի անվանումը	Գնման գինը /ՀՀ դրամ/	անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
ՆՄԲԿ-ԷԱՃԱՊ ՁԲ-26/19	3	Ինդեֆլյատոր-մեդֆլյատոր հավաքածու	19696800	Սուրեն Հակոբյան Գուրգենի Ա/Զ	40201069	ք. Երևան, Չարենցի 68/22	22.01.2026թ.	«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ	Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<բ>> ենթակետ (որպես ընտրված մասնակից զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից)	Ներկայացվում է ստորև

բժշկական նշանակության ապրանքների գնման նպատակով «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 26.11.2025 թվականին հայտարարել է ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/19 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 8 որոշմամբ ընթացակարգի 3-րդ չափաբաժնով ընտրված մասնակից է հայտարարվել Սուրեն Հակոբյան Գուրգենի Ա/Զ -ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

Մասնակցի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը գնումների տեղեկագրում հրապարակվել է 23.12.2025 թվականին, որով նշված անգործության ժամկետը 10 օրացուցային օր է:

Անգործության ժամանակահատվածը ավարտվել է 06.01.2026 թվականին:

Մասնակցին սահմանված կարգով պայմանագիր կնքելու առաջարկը ծանուցվել է 12.01.2026 թվականին:

Մասնակցի կողմից պայմանագիրը կնքելու համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված 5 օրյա ժամկետի վերջին օրը հանդիսանում է 19.01.2026 թվականը, որի դրությամբ պայմանագիր չի կնքել և Պատվիրատուին չի ներկայացրել համապատասխան ապահովումները:

21.01.2026 թվականին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հրավիրել է արտահերթ նիստ, որն ընդունված որոշմամբ Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Նույն նիստին գնահատող հանձնաժողովի թիվ 2 որոշմամբ Ընթացակարգի 3-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած:

Տվյալ չափաբաժնով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 22.01.2026 թվականին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ՅՈՒ. ԱԴԱՄՅԱՆ